NOUVEL HAY MAGAZINE
SANS FRONTIÈRES

Արայիկ Հարությունյանը ներկա է գտնվել Համահայկական 8-րդ խաղերի փակման հանդիսավոր արարողությանը

Վարչապետի աշխատակազմի ղեկավար, Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի նախագահ Արայիկ Հարությունյանն օգոստոսի 19-ին ներկա է գտնվել Համահայկական 8-րդ խաղերի փակման հանդիսավոր արարողությանը, որը տեղի է ունեցել Գառնիի տաճարում:

Միջոցառմանը ներկա են եղել նաև ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, կառավարական կազմկոմիտեի անդամներ, ՀԽՀԿ ներկայացուցիչներ, մարզիկներ, պատվիրակությունների անդամներ:

«Միասնություն սպորտով» կարգախոսի ներքո Համահայկական 8-րդ խաղերին մասնակցել են 41 երկրների 181 քաղաքների ավելի քան 7000 մարզիկներ: Մարզիկները մրցանակային տեղերի համար պայքարել են 19 մարզաձևում: Խաղարկվել է մեդալների 107 հավաքածու: Մրցումները սպասարկել են շուրջ 500 մրցավարներ:

Ընդհանուր առմամբ մեդալներ են նվաճել 15 պետությունների 48 քաղաքներ: Ամենաշատ մեդալները բաժին են հասել Երևանի պատվիրակներին: Համահայկական խաղերի ընթացքում սահմանվել են մի քանի մրցանակներ: Այսպիսով՝ Համահայկական խաղերի գեղեցկուհի մրցույթում հաղթող է ճանաչվել ԱՄՆ Բևերլի Հիլզ քաղաքի բասկետբոլիստուհի Աննա Ասլանյանը, Լավագույն պատվիրակություն է ճանաչվել Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի պատվիրակությունը, Արդարացի խաղ անվանակարգում հաղթող է ճանաչվել Արգենտինայի

Բուենոս Այրես քաղաքի պատվիրակությունը, Համահայկական խաղերի հայտնություն անվանակարգում հաղթել է Ղազախստանի թիմը, Մարզական ոգի և արիություն անվանակարգում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի թիմը: Լավագույն քաղաք անվանակարգում հաղթել է Լոնդոնի թիմը, նույն անվանակարգի մյուս հաղթողը Արթիկն է:

Համահայկական խաղերին աջակցել են շուրջ 2000 կամավորներ: Փակման հանդիսավոր միջոցառման ժամանակ չորս կամավորների օգնությամբ իջեցվել է Համահայկականի դրոշը, մարվել համահայկական ամառային 8-րդ խաղերի ջահը: